



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ  
ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք  
ՀՀ Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyan.lori@mta.gov.am

Արձանագրություն N 1

«20» դեկտեմբերի 2021 թվականի

**ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՄԱՍՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՐԳՈՎ ԸՆՏՐՎԱԾ ԱՎԱԳԱՆՈՒ  
ԱՌԱՋԻՆ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ**

2021 թվականի դեկտեմբերի 20-ին ժամը 11.00-ին Թումանյան համայնքի ավագանու նստավայրում՝ Մշակույթի պալատի Սմարթ սենյակում (ք.Թումանյան 3-րդ փ.2.2 հասցե) տեղի ունեցավ Համայնքի ավագանու առաջին նիստը.

Նիստին ներկա էին Լոռու մարզպետի օգնական Տ.Հովսեփյանը, ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության պետ Մ.Խեչումյանը, բաժնի պետ Ա.Անանյանը, Դսեղի և տարածաշրջանի հոգևոր հովիվ Տեր Գրիգորիս քահանա Դերմեջյանը, ավագանու անդամներ, համայնքապետարանի աշխատակիցներ և հյուրեր

Տերունական աղոթքով և ավագանիներին շնորհավորանքով հանդես եկավ Դսեղի և տարածաշրջանի հոգևոր հովիվ Տեր-Գրիգորիս քահանա Դերմեջյանը, ելույթ ունեցան Լոռու մարզպետի օգնական Տ.Հովսեփյանը և ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության պետ Մ.Խեչումյանը

Նիստը վարում է ավագանու նիստին ներկա՝ տարիքով ավագ անդամ՝ Ա. Եգանյանը

Ա.Եգանյանը հայտարարեց նիստի բացման մասին, ապա նիստին երկաները մեկ րոպե լռությամբ հարգեցին 2020թ. 44-օրյա պատերազմի նահատակների հիշատակը

Նիստը արձանագրում է «Թումանյանի համայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկի աշխատակազմի քարտուղար Ռուզաննա Շահվերդյանը, ժամը 10.00-11.00- նիրականացնում է ավագանու անդամների գրանցում և ստացված տվյալներն ամփոփելուց հետո նիստը վարողին է փոխանցում գրանցման ցուցակը

Թիվ 24 տարածքային ընտրական հանձնաժողովի՝ 12.12.2021թ. 47-Ա որոշմամբ և 16.12.2021թ. N 36 արձանագրությամբ Թումանյան համայնքի ընտրված ավագանու մանդատները բաշխվել են հետևյալ կերպ՝

«Հանրապետություն» կուսակցություն՝ 8 մանդատ  
«Քաղաքացիական պայմանագիր» կուսակցություն՝ 7 մանդատ:

Ա. Եգանյանը ընթերցեց ավագանու ընտրված անդամների անունները՝ ըստ կուսակցությունների

Նիստին ներկա է ավագանու 15 անդամ

Ա. Եգանյանը հայտարարում է նիստի բացման մասին և հայտարարում է նիստի

Օրակարգը՝  
Թումանյան համայնքի ղեկավարի ընտրություն մասին

Ղեկավարվելով ՀՀ Ընտրական օրենսգիրք ( սահմանադրական օրենք) 142.2-րդ հոդվածի 2-րդ մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 74-րդ հոդվածի 1-ին մասով և հիմք ընդունելով թիվ 24 տարածքային ընտրական հանձնաժողովի 2021 թվականի դեկտեմբերի 12-ի N 47 –Ա որոշումը և 16.12.2021թ. N 36 արձանագրությունը.

Ս.Եգանյանը հրապարակում է ընտրված համայնքի ղեկավարի անունը՝

**Սուրեն Վաչագանի Թումանյան** և վերջինիս հրավիրում տեղ զբաղեցնել նախագահությունում

Թումանյան համայնքի նորընտիր ղեկավար Սուրեն Թումանյանը ողջունեց ավագանու անդամներին և ներկաներին /կցում է տեքստը/

Սուրեն Թումանյանին և ավագանու անդամներին շնորհավորեց Լոռու մարզպետի օգնական Տ.Հովսեփյանը և ավագանու անդամ Տ.Մխիթարյանը

Շնորհավորում ենք պարոն Թումանյանին՝ Թումանյան համայնքի ղեկավար ընտրվելու կապակցությամբ, մաղթում հաջողություններ և բեղմնավոր աշխատանք՝ ի նպաստ և իբարտօրություն մեր համայնքի և մեր հայրենիքի

**Թումանյան համայնքի ավագանի.**

Թումանյան Սուրեն Վաչագանի «Հանրապետություն» կուսակցություն  
Շաքարյան Ռոման Ռոբերտի «Հանրապետություն» կուսակցություն  
Խաչիկյան Գոհարիկ Սարգսի «Հանրապետություն» կուսակցություն  
Վանյան Դավիթ Սոսի «Հանրապետություն» կուսակցություն  
Ղազարյան Կարո Վարազդատի «Հանրապետություն» կուսակցություն  
Քոչարյան Արամ Հրանտի «Հանրապետություն» կուսակցություն  
Դալլաքյան Նիկոլ Հովիկի «Հանրապետություն» կուսակցություն  
Մելիքսեթյան Էդգար Վարդգեսի «Հանրապետություն» կուսակցություն  
Մխիթարյան Տիգրան Սամվելի «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցություն  
Մելքոնյան Վահե Վահագնի «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցություն  
Հովսեփյան Լյուդմիլա Սարիբեկի «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցություն  
Գալստյան Սեդրակ Արտուշի «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցություն  
Աղաբեկյան Արամայիս Արմենակի «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցություն  
Վանյան Հրանուշ Դավիթի «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցություն  
Եգանյան Սվետլանա Մեսրոպի «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցություն

*(Մեծ քանակությամբ ձեռագրված ստորագրություններ)*



ՆԻՍԵ ՎԱՐՈՂ *(Ստորագրություն)* Ս.ԵԳԱՆՅԱՆ